«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

ՀԵՂԻՆԱԿ Իվետտա Վլադիսլավի Պետրոսյան

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ 6-րդ խումբ, Հայոց լեզու և գրականություն

ՂԵԿԱՎԱՐ Արմինե Ալբերտի Ղազարյան

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն էջ

1.Ներածություն 3

2.Գլուխ 1-ին՝ Սովորողի արժեհամակարգի վրա ազդող գործոնները 4-6

3.Գլուխ 2-րդ՝ Գրականությունը՝արժեհամակարգի լիարժեքության

ձևավորման միջոց 7-9

4.Գլուխ 3-րդ՝Աշակերտների արժեհամակարգի զարգացումը Շահան Շահնուրի <<Նահանջը առանց երգի >> վեպի ուսուցման միջոցով 9-16

5. Եզրակացություն 17-18

6.Օգտագործված գրականության ցանկ 19

Ներածություն

Արժեհամակարգը մարդու բարոյական ,գեղագիտական,հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է,որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ ,բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները,սակայն արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է գրականության դերը:Քանի որ արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը,ապա դրա յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության,սեփական ժողովրդի պատմության ,մշակութային արժեքների համար հպարտության զգացում:

Հայաստանի Հանրապետությունում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է Հանրակրթության պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ:Յուրաքանչյուր ուսումնական առարկայի համար սովորողների պատրաստվածությանը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կերպով նշված են արժեքները և դրանց ձևավորումը:Մեր խնդիրն է աշակերտներին հասցնել այն գիտակցմանը,որ հենց դպրոցում է ձևավորվելու իրենց արժեքային համակարգը:Հայ գրականությունը այն առարկաներից է, որի միջոցով էլ հնարավոր է լինում աշակերտների մեջ սերմանել արժեքային համակարգ հասկացությունը:Աստիճանաբար նրանց մոտ ձևավորվում է այնպիսի արժեհամակարգ,որի շնորհիվ նրանք կարողանում են ճիշտ տեղ գրավել կյանքում:Հանրակրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետի 9-րդ ենթակետը սահմանում է,որ ուսուցիչը աշակերտների մեջ դաստիարակում է հայրենասիրություն,ձևավորում պատշաճ վարքագիծ և վարվելակերպ: Իսկ այս ամենը ուսուցիչը հիմնականում իրականացնում է դասավանդման ընթացքում:

ԳԼՈՒԽ 1

ՍՈՎՈՐՈՂԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Արժեքը աշխարհի յուրահատուկ ընկալումն է,որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքների և ինֆորմացիայի,այլև սեփական կենսափորձի հիման վրա:

Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտել հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափությունների համատեքստում:Արժեքային համակարգի ձևավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից և մարդկանց հետ շփումից զատ:Արժեքային համակարգի ձևավորումն ընթանում է դաստիարակության և կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով:Աշակերտների արժեքային կողմնորոշումների համակարգի ձևավորմանը և զարգացմանը նպաստում են նաև **անհատականացումը** (աշակերտը սեփական <<Ես>>-ի արժեքներն է ամրապնդում) և **ինտեգրումը,** որն իրականացվում է միմյանց կարծիքները լսելով,իր և դասընկերների արժեքների միջև առկա հակասությունների վերացմամբ,դրանց փոխակերպման ճանապարհով:Սովորողների արժեքների անհատական համակարգի ձևավորմանը ազդում է ընտանիքը , սոցիալական միջավայրը,դպրոցը,գեղարվեստական կրթությունը:Վերջինս սերտորեն կապված է աշակերտի բարոյական կերպարի,համոզմունքների,իդեալների ձևավորման հետ:Գեղարվեստական կրթությունը գրականության ուսուցման միջոցով բխում է անհատի արժեհամակարգի բուն էությունից՝ կապված մարդու,բնության,արվեստի և հասարակության փոխարաբերություններից:Մշակույթի ,հասարակության արժեքների յուրացումը իրականանում է հասանելի տեղեկատվական միջոցների,մարդկանց հետ շփման միջոցով:Սովորողի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը նրա հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափությունն է:Աշակերտի արժեհամակարգի վրա ազդող գործոններից են ճշմարտությունը, սերը , գեցեցիկը, գեղեցկի զգացողությունը:Ոչ մի աշակերտ չի կարող անտարբեր անցնել այն ամենի կողքով,ինչը պարուրված է սիրով ,ինչն իրեն գեղեցիկ է թվում:Այդ պատճառով էլ,ըստ իս, բոլոր դեպքերում սովորողների գիտակցությանը պիտի հասցնել այն ճշմարտությունը,թե գեղեցիկը մարդու կենսափորձից դուրս ինչ-որ առանձին բան չէ, և կատարյալ սերը,գեղեցկությունն ու երջանկությունը հավերժական իդեալներ են,յուրաքանչյուր անհատի կյանքում միանգամայն իրագործելի ձգտումներ: Աշակերտների արժեհամակարգի վրա ազդող դրական գործոններից է նաև այն,թե ինպես ենք մենք նրան ուղղորդում պայքարի ,գիտակից նպատակի՝ հանուն անձնական և հասարակական առաքինությունների:Որպեսզի աշակերտները տեսնեն և զգան

սերը,գեղեցկությունը,ճշմարտությունն ու առաքինությունը,պետք օգնել նրանց թափանցելու գրականության գոհարների ոսկեշող աշխարհը:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են իրեն շրջապատող միջավայրի արժեքները,կանոնները,չափանիշները,հայացքները ,որոնք միշտ չէ,որ համապատասխանում են իր կողմից ընդունված արժեքներին:Հաճախ աշակերըները ուղղակի ընդօրինակում են հասարակության կաղապարված արժեքները:Աշակերտի արժեհամակարգի ձևավորման վրա ազդող հաջորդ գործոնը տարիքային առանձնահատկությունն է:Նրա վարքը,բարոյական և հոգեբանական գծերը փոխվում են ,ինչն արտացոլվում է նրա խոսքում,արտաքին տեսքում,ապրելաձևում , հասակակիցների հետ փոխհարաբերություններում:Տարիքային զարգացմանը բնորոշ է նրանց հակումը դեպի մշակութային որոշ շերտեր,կենցաղին բնորոշ արժեքների դասակարգումը:Այս պարագայում ևս մանկավարժների խնդիրն է աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումը:Մանկավարժը ջանք չպետք է խնայի իր աշակերտներին սեփական օրինակով ցույց տալու,որ ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախանալն ու գոհանալն է մեր լավ կյանքի հիմքում:Չ՞է որ աշակերտների արժեհամակարգի ձևավորման վրա ազդում է նաև ուսուցչի վառ օրինակը,անկեղծ շփումը նրա և հեղինակավոր այլ անձանց հետ:Աշակերտը իր ուսուցչից ստանում է արժեքների վերաբերյալ դրական մոդելներ:Սակայն հարկ է նշել,որ կարող են լինել նաև բացասական օրինակներ,որոնք անդառնալի ազդեցություն են ունենում սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա:Այս առումով մանկավարժը խստագույն վերահսկողություն պիտի իրականացնի `ըստ հարկի միջամտության և ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով:Ուուցումը կարևոր դեր է կատարում անձի ձևավորման գործընթացում:Ոսուցիչը առարկայական ծրագրերի յուրացման և ուսուցման միջոցով աշակերտների մեջ սերմանում է բարոյական,գեղագիտական,ռազմահայրենասիրական,բնապահպանական,հոգևոր և այլ գիտելիքներ ու վերաբերմունք:Ուսուցման ընթացքում կիրառված զանազան մեթոդները լավագույնս ներգործում են աշակերտների արժեհամակարգի և ճանաչողական ունակությունների վրա,և նրանք հնարավորություն են ունենում ստացած գիտելիքները ըստ նպատակի և անհրաժեշտության օգտագործելու կյանքում:

Սովորողների անձի արժեքների ձևավորման գործում իր ուրույն տեղն ունի հայոց լեզվի ուսուցումը:Հայոց լեզվի անհուն հարստությունը փռելով սովորողների առջև՝ մենք նրանց դաստիարակում ենք ճանաչելու և գնահատելու մեր և այլոց հոգևոր արժեքները, հղկում ենք նրանց գեղագիտական ճաշակը:Արժեհամակարգի

ձևավորման թերևս ամենակարևոր գործոնը հայրենասիրության զգացում դաստիարակելն է:

Այս տեսանկյունից մեզ անսահման հնարավորություններ է ընձեռում արվեստների թագուհին `գրականությունը,մասնավորապես հայ գրականությունը:Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է,այն սոցիալական դիրքորոշում է,որի հիմնական բաղադրիչը սերն է:Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում:Ամեն հայ ուսուցիչ հայրենասիրության և արիության դասեր է տալիս իր կողմից ընտրված ու առանձնացված հեղինակի,ստեղծագործության միջոցով:Նման ընտրությունը ուսուցչին հնարավորություն է տալիս մանկավարժական իր խնդիրները լուծելու,այս պարագայում ` հայրենասիրության վեհագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու և վառելու համար:

ԳԼՈՒԽ 2-ՐԴ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԼԻԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

Հայոց /մայրենի/ լեզվի,գրականության ,հայ գրականության դասավանդումը բացառիկ դեր ունի անհատի,պետականամետ հայ քաղաքացու արժեքային համակարգի,նրա բարոյական նկարագրի ձևավորման գործում:Ազգային ոգին և մշակույթը արժևորելու,գնահատելու ,պահպանելու,հաջորդ սերնդին փոխանցելու պատրաստակամությամբ և գործուն մասնակցությամբ դաստիարակվում է հայրենասեր,պետական մտածողություն ունեցող,օրինապահ ,բարեկիրթ և զարգացած անձնավորություն,որը պատրաստ է սովորելու ողջ կյանքի ընթացքում:

Հայ գրականության ուումնասիրությունը աշակերտներին հնարավորություն է տալիս հարստացնելու բառապաշարը,պատկերավոր մտածողությունը,ձևավորելու գրական ճաշակ,զարգացնելու անձնային նկարագիրը,դիրքորոշումը իր երկրի,ազգային արժեհամակարգի ,սեփական անձի և կյանքի հանդեպ:Գրական հերոսների արարքների դրդապատճառները քննելու և ուսումնասիրելու ընթացքում սովորողը սկսում է արժևորել սեփական բարոյական սկզբունքները,որոնք կարող են չհամապատասխանել գրական հերոսների սկզբունքներին:Եվ աշակերտը սկսում է իր սկզբունքները համաձայնեցնել կամ համեմատել նրանց արժեքների հետ. կողմնորոշումն ուղղվում է դեպի խղճի կանոնները:Գրականության ուսուցման նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է,այլև նրա մեջ բարոյական բարձր հատկանիշներ և արժեքներ ձևավորելը:Գրականության ուսուցման հիմքում ընկած է մտածական հմտությունների ձևավորումը:Աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ ՝ ինչպիսի՞ մարդ են ուզում դառնալ,ո՞ր հերոսին են ուզում նմանվել և ինչո՞ւ:Ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությունը օգնում է որոշակի արժեքների բացահայտմանը:Դասավանդման ընթացքում ուսուցիչը գրական նյութն օգտագործում է աշակերտների մեջ ձևավորելու արժեք-արժանիքներ,որոնք նրանց համար ոչ միայն կենսականորեն անհրաժեշտ բարիքներ են,այլև ցանկալի հատկություններ,ինչպես օրինակ՝ հաստատակամությունը, աշխատասիրությունը, համբերատարությունը: Արժեհամակարգի ձևավորումը և զարգացումը առավել արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչն օգտագործում է արժեքի հետևյալ հատկանիշները՝ պատկերացում, դիրքորոշում, պահանջմունք,

շարժառիթ, իմաստ և հասարակության կենսագործունեության արդյունք:Թերթելով գրականության դասագրքեր , ուումնասիրելով այդտեղ զետեղված գրական երկերը ՝ կհամոզվենք,որ վերը թվարկված հատկանիշները կարելի է սերմանել աշակերտների մեջ գրականության յուրաքանչյուր դասին տարբեր մեթոդների և հնարների կիրառմամբ:

Հայ գրականության դասվանդումը ավագ դասարաններում միտված է սովորողների մեջ զարգացնելու այն գաղափարը և գիտակցումը,որ գնահատեն մայրենի լեզուն որպես ազգապահպանության ,ազգային լեզվամտածողության ,պետականության ամրապնդման ,մշակութային արժեքների պահպանման ,ինքնաճանաչման կարևոր գործոն:Հայ գրականության դասաժամերը նպաստում են նրան,որ սովորողները արժևորեն հայերենի դերը,գնահատեն հայ գրականության դերը արվեստի այլ բնագավառների համատեքստում:Ուսումնառության ամբողջ ընթացքում աշակերտները աստիճանաբար գիտակցում են ,որ հենց իրենք են հայկական պատմամշակութային արժեքների ժառանգորդները:Մանկավարժական փորձը ցույց է տալիս,որ հայ գրողների կենսագրական փաստերի,նրանց ազգանվեր գործունեության,կերտած հայրենասեր հերոսների օրինակով աշակերտների արժեքային համակարգը զարգանում է այնքան,որ նրանցից շատերը սկսում են զբաղվել ինքնադաստիարակությամբ,զարգանում է նրանց արդարամտությունը, լայնախոհությունը,հավասարակշռվածությունը:

Ըստ հայ գրականության հանրակրթական ծրագրի ՝ արժեհամակարգի ձեռքբերման մակարդակն իր մեջ ներառում է հետևյալ կետերը՝

ա/հայրենասիրական,ազգային և համաշխարհային արժեքների յուրացում,
բ/պատասխանատվության զգացում սեփական արարքների համար,
գ/հոգատար վերաբերմունք մարդու և բնության նկատմամբ,
դ/կամքի դրսևորում:

Յուրաքանչյուր թեմա ուսումնասիրելիս ուսուցիչը ջանք չի խնայում ստեղծագործության գաղափարը բերելու իրական կյանք,կապել սովորողի կենսափորձի հետ,հասկանալու գրողի ասելիքը:Հայ գրականություն առարկայի ուսումանսիրման շրջանակներում սովորողների մոտ ձևավորվում է կարողունակությունների մի հրաշալի փունջ,որը կարելի է ներկայացնել այսպես՝

Արժեքներ	Վերաբերմունք
Մարդկային արժանապատվության և մարդու իրավունքների արժևորում	Դրական վերաբերմունք այլ մշակույթների նկատմամաաբ
Ազգային մշակույթի արժևորում	Հարգանք և վստահություն
Արդարադատության, ժողովրդավարության,համերաշխության արժևորում	Քննադատական մտածողություն

Ազգասիրության և ընտանիքի արժևորում	Հանդուրժողականություն և պատասխանատվություն

Կարողունակություններ ,21-րդ դարի հմտություններ,գիտելիք և ընկալում

Ինքնակրթվելու հմտություն	Ինքնաքննադական ընկալում
Վերլուծական և քննադատական մտածողության հմտություն	Աշխարհի քննադատական ընկալում
Ճկունություն	Սոցիալական պատասխանատվության ընկալում
Հարմարվողականություն և ապրումակցում	Բարոյական ա րժեքների ընկալում
Համագործակցային հմտություն	
Կոնֆլիկտի լուծման հմտություն	

ԳԼՈՒԽ 3

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԻ <<ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ>> ՎԵՊԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Շահան Շահնուրի <<Նահանջը առանց երգի>> վեպը ուսումնասիրվում է 12-րդ դասարանում:Վեպում արծարված թեմաները՝ ձուլում,նահանջ,հեռացում ազգային արմատներից,մշակույթների բախում և ինքնության կորուստ , առավել քան արդիական են,և թեմայի ուսուցման **նպատակն** է սովորողների մեջ ամրապնդել հայրենասիրության,ազգային և լեզվական արժանապատվությունը,համախմբել ազգային գաղափարների շուրջ,ձևավորել արժանապատիվ հայ մարդու տեսակ,պահպանել ազգային ինքնությունը:

Թեմայի ավարտին ակնակալվող **վերջնարդյունները** են՝

Սովորողը

1.կճանաչի

ա/Շ.Շահնուրին որպես նահանջի գրականության ներկայացուցիչ

բ/գրողի ստեղծագործությունները

2.կուսումնասիրի գրական երկի լեզուն և ոճը

3.կկարևորի հայրենիքն ու հայոց լեզուն,ազգային մշակուկթն ու բարքերը

4.**կկարողանա**

ա/վեր հանել ստեղծագործության հիմնական գաղափարը

բ/ցույց տալ գրական երկի կերպարների հոգեբանական զարգացումը

գ/ցույց տալ երկի արդիականությունը

դ/համեմատել կամ հակադրել այլ ստեղծագործությունների հետ

ե/ձևակերպել հարցեր,հորինել երկխոսություն,գրել կարծիք

5. **կդրսևորի** հանդուրժողականություն այլ տեսակետների,կարծիքների դրսևորման դեպքում

Վեպի ուսուցման ընթցքում կիրառված **մեթոդներն** են՝մտքերի տարափ, Т-աձև աղյուսակ ,հարց ու պատասխան,հեղինակի հարցում , հինգրոպեանոց շարադրանք , վեց մտածող գլխարկները:

Վեպի ուսուցման ընթացքում աշակերտների մեջ խորանում է հայրենասիրության զգացումը,սերը ոչ միայն հայրենիքի ,այլև հայի ու հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ: Զգալով ձուլման,կորստի և նահանջի վտանգը՝ աշակերտները սկսում են արժևորել հայրենիքը և մայրենի լեզուն:Այս թեմայի ուսուցման ընթացքում մեր՝ գրականության ուսուցիչներիս խնդիրն է զարգացնել աշակերտի հայրենասիրական զգացմունքները,հասկացնել,որ հայրենասիրությունը բարձրագույն որակ է:Վեպի ուսուցման միջոցով սովորողները ստանում են նաև բարոյական դաստիարակություն, իսկ << բարոյականությունը իրար է միացնում այնպիսի որակներ ու հասկացություններ, ինչպիսիք են բարությունը , պարզությունը, անձնական մաքրությունը, արդարամտությունը ,աշխատասիրությունը , կարգավորվածությունը, կարգապահությունը,կարգապահությունը և այլն [1]>>:

Վեպի ուսուցման միջոցով սովորողների մտածողությունը ընդունում է փիլիսոփայական ուղղվածություն,նրանք կարողանում են ինքնուրույն դատել հերոսներին,նրանց արարքները,և փոխվում է աշակերտների աշխարհայացքը:

Շահան Շահնուրը սփյուռքահայ գրականության ականավոր դեմքերից է:Նրա անվան հետ է կապված նահանջի գեղարվեստական մեկնաբանության փաստը:Հենց նա առաջինը տագնապահար հնչեցրեց սփյուռքահայերի ձուլման վտանգի ահազանգը:Սթափ հայացքով և ռեալիստական մեթոդով Շահնուրը պայքարեց ազգի և ազգային արժանապատվության համար,պայքարեց անմիաբանության,կրավորական վարքագծի և ուժերը ջլատող այլ արատների դեմ:Այսօր էլ Շահնուրի բարձրացրած խնդիրները արդիական են,և դրանց լուծումը մեծ մարտահրավեր է՝ուղղված հայ մարդուն:Այս վեպի ուսուցման ամբողջ ընթացքում աշակերտներին տանում ենք այն համոզման ,որ այս երկում ազգային և սիրային հարցերը ոչ միայն միաձույլ են ու

[1] Յու.Ա. Ամիրջանյան,Ա.Ս. Սահակյան Մանկավարժություն,ուսումնական ձեռնարկ, Երևան ,էջ 346,

զուգակցված,այլև ազգային խնդիրները արծարծվում են սիրային սյուժեի միջոցով:Սովորաբար ռոմանտիկական երկերում սերն ու հայրենիքը միաձուլված են,և մեկը ուժ է տալիս մյուսին: Օրինակ՝ Ռաֆֆու <<Սամվել>> պատմավեպում գլխավոր հերոսը ,Մուրացանի <<Խորհրդավոր միանձնուհին>> վիպակի հերոսները հայրենիքի սերը վեր են դասում անձնական սիրուց: Սակայն այս վեպում սերն ու հայրենիքը հակառակ բևեռներում են. ահա թե ինչու է սկսվում նահանջը:Աշակերտներին Շահան Շահնուրի կյանքին,գործունեությանը և ստեղծագործությանը ծանոթացնելուց հետո սկսում ենք <<Նահանջը առանց երգի>> վեպի ուսուցումը:Կիրառելով << մտքերի տարափ>> մեթոդական հնարքը՝ նախ հարցնում ենք ,թե ինչ են հասկանում նահանջ և հայրենիք ասելով.աշակերտները պետք է մեկ բառով արտահայտեն իրենց մտքերը : Նպատակահարմար է նաև T-աձև աղյուսակում գրել նահանջ և հայրենիք բառերը և լրացնել աշակերտների ասածները:

Հայրենիք	Նահանջ
Հող	հեռացում
Հիշողություն	Մոռացություն
Պատմություն	Պարտություն
լեզու	փախուստ
կյանք	շեղում

Այս մեթոդի կիրառման գլխավոր գործառույթը մտքերի գեներացիան է,և սովորողները հասկանում են,որ իրենց արտահայտած բոլոր մտքերն ու գաղափարներն ընդունելի են,և ոչ մի գաղափար արժեզրկված չէ:Այնուհետև կարելի է մեջբերել Մուրացանի հետևյալ ասույթը.<<Կա մի ուրիշ մարմին,որ ավելի ու ավելի է պաշտելի,քան մեր սեփականը:Այդ մարմինը հայրենիքն է>>[2]:

Աշակերտները մտորում են հենց այս գաղափարի շուրջ .իսկ իրենք ինչպե՞ս են վերաբերվում այդ մարմնին:

Անդրադառնալով <<Նահանջը առանց երգի>>վեպի դիպաշարին ՝ կարևորում ենք Շահնուրի այն կարծիքը,որ ազգապահպանության և հայրենապահպանության հիմնական օղակը ընտանիքն է,և նրա քայքայումից ,ավանդական հայ ընտանիքի վերացումից էլ սկսում է ազգային կորուստը:

Հաջորդիվ ներկայացնում ենք վեպի գլխավոր հերոսների ՝Պետրոսի (Պիեր) և մադամ Ժաննի (Նենեթ) սիրո պատմությունը:Սակայն վերջինս Լեսքյուրի սիրուհին է և նրա հետ կապված է իր անցյալով:Այնուհետև դեպքերն այնպես են զարգանում,որ ավտովթարի հետևանքով Լեսքյուրը մահանում է,իսկ Նենեթը՝

[2] Մուրացան, Երկերի ժողովածու, հատոր երկրորդ,Երևան, 1975, էջ 192

անդամահատվում:Պիերը ոչ մի կերպ չի թողնում իր սիրած կնոջը,իսկ կինն էլ իր հերթին, չխորտակելու համար իրենից բավականաչափ երիտասարդ Պիերի ապագան ,հեռանում է:Պետրոս-Պիերի մի քանի օրվա բացակայության ընթացքում Նենեթը հիվանդանում է:Վերադարձին Պիերը նրան գտնում է մահամերձ:Գերագույն հուզմունքի մեջ Պետրոսն ուզում է մրմնջալ <<Հայր մերը>>,բայց աղոթքի բառերը չի հիշում իր մայրենի լեզվով: Կոստանը,ով ծառայում էր Նենեթին,հուշում է ֆրանսերենը:Պետրոսն արդեն վերջնականապես Պիեր էր դարձել՝ ֆրանսիացի:Նահանջը ազգային էությունից կատարյալ էր:Այստեղ կարելի է դադար առնել և զուգահեռ անցկացնել Գ.Մահարու <<Ճաղկած փշալարեր>> վեպի հերոսներից մեկի՝ադրբեջանցի կառապան Մամուի հետ,որը երբեք չէր աղոթում,սակայն զավակի մահը և սիրելի կնոջ տառապանքը ստիպում են նրան աղոթել իր մայրենի լեզվով:Այսպիսով զարգանում է մտածական ունակությունը ըստ Բլումի տաքսոնոմիայի 4-րդ աստիճանի՝ գաղափարների մեջ կապեր ստեղծել, համեմատել ,հակադրել:

Հաջորդ դասին կիրառում եմ <<Հեղինակի հարցում>> մեթոդը:Նախապես աշակերտներին հանձնարարում եմ տանը վեպից կարդալ նշված հատվածները:Դասի ընթացքում աշակերտների հետ մշակում ենք հարցեր հեղինակին ուղղելու համար,օրինակ՝

ա/մեկնարկային հարցեր

1.Ի՞նչ էր գրողն ուզում ասել այստեղ:

2.Ո՞րն էր գրողի մտահոգությունը:

բ/Ստուգող հարցեր

1.Ի՞նչ նկատի ուներ հեղինակը տվյալ հատվածում:

2.Հեղինակի խոսքերը առնչվո՞ւմ են մեր օրերին:

գ/Քննադատական մտածողությունը զարգացնող հարցեր

1.Ի՞նչ էր մտածում այդ կերպարի մասին:

Երբ աշակերտները բավականաչափ տեղեկանում են սյուժեին,անցնում ենք կերպարների քննությանը և վերլուծությանը:Այս փուլում կիրառված մեթոդները նպաստում են սովորողի՝ որպես անհատի ,հոգևոր և մտավոր,անձի արժեքային համակարգի զարգացմանը:Կերպարների համակողմանի վերլուծությունը,երկի գաղափարագեղարվեստական հարստության օգտագործումը նրանց մեջ դաստիարակում է բարոյական բարձր հատկություններ:

Վեպի հերոսները <<Փարիզի տղաքն>>էին՝Պիեր-Պետրոսը,Հրաչը,Սուրենը ,Զարեհ – Լոխումը, ֆրանսիացի Լեսքյուրը,կին հերոսներից՝ լա փթիթ Լիզը,մադամ Ժաննը,Սյուզանը :Դասարանի 6 աշակերտներին բաժանելով 6 խմբի ՝ հանձնարարում

եմ ուսումնասիրել կերպարներին, և հաջորդ դասին յուրաքանչյուրը ներկայացնում է իր հերոսին/ խմբերը կոչվում են իրենց հանձնարարված հերոսի անունով/:Կիրառում եմ <<Վեց մտածող գլխարկները>> մեթոդը:

Սպիտակ մտածողության գլխարկը ներկայացնում է Պիեր-Պետրոսին :Սպիտակ գլխարկով աշակերտը տիրապետում է փաստերին,հավաքում է լրացուցիչ տեղեկատվություն:Նա ներկայացնում է իր հերոսին դասագրքի և իր հավաքագրած փաստերի հիման վրա:Պետրոսը հայ երիտասարդ էր,որը հաստատվել էր Փարիզում և զբաղվում էր լուսանկարչությամբ:Նրա ապրած միջավայրը մերկության,անամոթության և սեթևեթանքի շաղախ էր:Նա ապրում է խանդի,հուսախաբության ու նվաստացման պահեր:Նա մերթ աննկատ,մերթ օրինաչափորեն հեռանում է ազգային կյանքից այնքան,որ չի հիշում տերունական աղոթքը:Պատմողը հաղորդում է նաև մի կարևոր փաստ. Պիերն այնքան էր հեռացել ազգայինից,որ անգամ չէր հիշում Պոլսից մոր ուղարկած նամակի մասին,իսկ նամակի հետ մետաքսե քիսա կար և անուշեղեն:Պիերը քիսան օգտագործում է որպես Նենեթի մազափնջի պահոց,այնինչ քիսան մաքրության խորհրդանիշ էր:Հայրենիքի հիշատակներն անգամ ստանում են այլ բովանդակություն:Սպիտակ գլխարկով մտածողը ստիպում է դասընկերներին մտածել լեզու, հայրենիք,հավատք արժեքների մասին:

Կարմիր մտածողության գլխարկը զգացմունքների և հույզերի միջոցով ներկայացնում է Զարեհ-Լոխումին:Նա կիսվում է իր տպավորություններով,արտահայտում հիացմունք,վախ,տխրություն:Ընկերները նրան Լոխում էին կոչում ճերմակամորթ լինելու և քաղցր բնավորություն ունենալու համար:Միայն Զարեհն է,որ չի նահանջում,որ հուսահատ պայքարում է ազգային դեմքը պահելու համար՝ ամեն անգամ ցավ ապրելով,երբ նորից ֆրանսերեն թերթ էր տեսնում:<<Չպիտի՞ ըլլա,որ դուք ասանկ մը ցնցվիք,մաքառիք ձուլումին ու այլասերումին դեմ:Մենք ալ հայրենիք մը ունինք,պետք է պատրաստ կենանք հոն երթալու>>[3] ,- ասում էր Զարեհը,որը և մեռնում է հայրենիքին օգտակար լինելու արդեն անգիտակից երազով:Կարմիր գլխարկով աշակերտը կարևորում է կերպարի արդիական լինելը.Չէ՞ որ պատերազմը ապացուցեց,որ մենք Զարեհներ շատ ունենք:Զարեհի կերպարը սովորողների մեջ ամրապնդում մի վեհ արժեք՝ ազգը պահողը լեզուն է,հավատը,խիզախ ու հայրենասեր զինվորը:

Դեղին գլխարկով աշակերտը գտնում է լուծումներ իր հերոսի ՝ Հրաչի համար:Տրամադրված է դրականորեն, եթե անգամ այնքան էլ լավ բան չկա:Կնամոլ

[3] Շահան Շահնուր ,Երկեր երկու գրքով,<<Նահանջը առանց երգի>>,<<Սովետական գրող>> հրատ.,Երևան,1982,էջ 114

Հրաչի նահանջը բնական էր ու սպասված,նա իրեն երջանիկ էր զգում անբարոյական Սյուզանի հետ ամուսնանալու համար:Նա ,որ խառնվածքով հակառակ է սովորականից բարձր նյութեր խորացնելուն, անընդունակ է չափազանցված ճշմարտությունը ըմբռնելու, տեսնելով Պիերի պահած լուսանկարը՝ Նենեթը Անիի ավերակների վրա,գոչում է.<<Հա-յաս-տա-նի պատ-կերն է,բան մը տվեք,նա-յե-ցեք>>[4] : Պետրոսի `անբարո կնոջը Անիի ավերակների վրա նկարելը հանդիմանության էր արժանի,Հրաչի դեպքում նման կնոջ հետ ամուսնանալը երջանկություն էր .Սյուզանը լավ տանտիրուհի էր ,շնորհքով ընտանիքի զավակ էր,դեռ ավելին ,իրենց զավակի անունը պիտի Սյուզանի հոր անունը դնեին:Ահա հայ ավանդական ընտանիքից նահանջելու վառ օրինակ. նահանջ առանց երգի:

Սև գլխարկը դեղինի հակառակն է:Այս աշակերտը ներկայացնում է Լեսքյուրին ` տալով բացառապես կրիտիկական գնահատական , միևնույն ժամանակ ցուցաբերում է զգուշություն:Լեսքյուրի փողերով էր Նենեթը բացել լուսանկարչատունը,որտեղ էլ աշխատում էր Պետրոսը:Լեսքյուրը Նենեթի սիրեկանն էր,շատ անգամ անվայելուչ կերպով լուսանկարել էր Նենեթին:Նենեթի հետ կապված էին անցյալով ,ունեին ընդհանուր շահեր,հանուն գումարի խաբել են,խորամանկել:Քանի որ սև գլխարկով մտածողը հոռետես է,նա գտնում է,որ Լեսքյուրի նման մարդը պիտի պատժվեր , պատասխան տար սեփական մահով:

Կանաչ գլխարկով աշակերտը ներկայացնում է վեպի կանանց՝ գտնելով նոր գաղափարներ,նորացնելով եղածը:Աշակերտը չի վանում հեղինակի սադրիչ մոտեցումները:Նենեթը և Սյուզանը անբարո կանանց խորհրդանիշն են:Եթե Նենեթը այդ ճանապարհին հայտնվել էր կյանքի դժվարությունների դիմակայելու ,հետո ստիպված,որպեսզի Լեսքյուրը չբացահայտեր իր անբարոյական նկարները,ապա Սյուզանի համար իր վարած կյանքը սովորական էր,նա կարող էր մի ընկերոջը փոխարինել մյուսով:Այս և նման կանանց կերպարը թույլ է տալիս մտածելու,որ ֆրանսիացի բոլոր կանայք անբարոյական են:Այդ համոզման կանաչ գլխարկով աշակերտը եկել էր `հիմնվելով Պետրոսի բառերի վրա,թե Նենեթը անբարոյական չէր լինի,եթե ֆրանսիացի չլիներ:

Սակայն Փթիթ Լիզը միակ մաքուր ու անկեղծ արարածն էր այդ գարշահոտության մեջ,նա անկեղծորեն սիրում էր Պիերին:

Կապույտ գլխարկով մտածող աշակերտը ներկայացնում է վեպի առանցքային կերպարին՝ Սուրենին:Աշակերտի խնդիրն է կերպարի միջոցով գտնել խնդիրների լուծումը,ինչ անել չշեղվելու համար ազգային ավազանից:Թվում է,թե Սուրենը չի

[4] Շահան Շահնուր ,Երկեր երկու գրքով,<<Նահանջը առանց երգի>>,<<Սովետական գրող>> հրատ.,Երևան,1982,էջ 93

նահանջի,բայց նա ևս գործով չի տարբերվում մյուսներից.նա իր առաջին գիրքը լույս է ընծայում ֆրանսերեն:Սուրենը հաճախ դառը խոսքեր է ասում իր ընկերների հասցեին,մատնացույց անում ազգի թերություններն ու արատները,որորնք էլ նահանջի հիմքն են:Սուրենի համար հայրենիքի գաղափարը շատ անգամ գարշապար է,շատ անգամ հերոս,անգամ ավանդավեպ է:Իր դառը խոսքում հաճախ ճշմարտություն կա:Սուրենը տալիս է նաև հայի նկարագիրը .<<Եսամոլ, անձնասեր, անմիաբան, նպարավաճառ…մինչև այն օրը ,երբոր չեմ գիտեր,ո՛ր հարսանիքին,երկնքեն ոսկի,արծաթ ու մարգրիտ տեղա, հոն ,ուր ահագին հարստություն կա,հոն ծայրահեղ թշվառություն կա>>[5]:Նա ասառաջ է քաշում <<մենք>>-ի գաղափարը:Ըստ նրա՝ ճակատամարտից հզոր բան կա՝ նահանջը,հայերի նահանջը,<<մենք>>-ի վերացումը: <<Կնահանջեն ծնոք,որդի,քեռի,փեսա,կնահանջեն բարք , ըմբռնում , բարոյական , սեր:Կնահանջե լեզուն, Կնահանջե լեզուն: Եվ մենք կնահանջենք բանիվ և գործով,կամա և ակամա,գիտությամբ և անգիտությամբ.մեղա՛ Արարատին>>[6],- ահա Սուրենի այս գնահատումը հայ երիտասարդների վիճակի բանաձևումն է: Սպիտակ գլխարկով աշակերտը ընդդիմանում է Սուրենի այս բառերին՝ հիշելով նրա գիքի մասին.<<Գրածներդ ոչ մեկ հայու կրնան խոցիլ,որքան ատեն ,որ անոնց մեջ <<կարոտ>> բառը չկա…>> ,<<Միայն այդ չէ,որ թերի է,թող որ հիշեցնեմ,թե ֆրանսերենը գոյություն չունի նաև <<Մա՛յր>> բառին,<<հա՛յ >> բառին,<<աքսոր>> բառին…<<մեր գաղթական>>-ին ,մեր <<որբ>>-ին…>>[7] :

Այստեղ ուսուցիչը կատարում է պարզաբանում. Շահնուրը իր հերոսներին չի բաժանել լավ և վատ հայերի,նրանք բոլորը երիտասարդ հայ տղաներ էին,որոնք կարոտում էին իրենց ծնողներին,իրենց նախորդ կյանքը:Սակայն փարիզյան իրականությունն ավելի զորեղ էր նրանց հայրենասիրությունից:Ահա այստեղ էր նահանջ առանց երգի,այսինքն՝ նրանք նահանջում էին ոչ թե նորից իրենց դիրքերը վերադառնալու և պայքարը շարունակելու,այլ նրանց նահանջը պարտված բանակի նահանջ էր:Օտար միջավայրում,օտար բարքերի և մշակույթների ազդեցության մթնոլորտում անհնար էր պահպանել ազգային դեմքը: Կարելի է տալ **հինգրոպեանոց շարադրանք**՝ կա արդյոք այդ վտանգն այսօր ,եթե այո,ապա ինչ պե՞ս պայքարել : Շարադրանքը ստուգելուց և ամփոփելուց հետո կատարում ենք անդրադարձ.Ի՞նչ պատմություն է ընկած վեպի հիմքում,ինչի՞ց էին նահանջում հերոսները,ի՞նչ է նշանակում վեպի վերնագիրը:

---

[5] Շահան Շահնուր ,Երկեր երկու գրքով,<<Նահանջը առանց երգի>>,<<Սովետական գրող>> հրատ.,Երևան,1982,էջ 93

[6] Շահան Շահնուր ,Երկեր երկու գրքով,<<Նահանջը առանց երգի>>,<<Սովետական գրող>> հրատ.,Երևան,1982,էջ 110

[7]Շահան Շահնուր ,Երկեր երկու գրքով,<<Նահանջը առանց երգի>>,<<Սովետական գրող>> հրատ.,Երևան,1982,էջ 149

Միայն այսքանից հետո ուսուցիչը կարդում է վեպի վերջին հատվածը.<<Ներքին խժալուր աղմուկներուն մեջ ,ականջներուն անվերջանալի վզզոցեն տարված՝ մեկեն կարծեց ,մոտավոր բակե մը բարձրացավ հին,շատ հին մեղեդի մը բոլորին ծանոթ ….,որ կուզեր ավելի երկրորդինը հուզել,քան չորրորդ հարկինը,որ ա՛լ պարտասած՝ երբեմն կկառչեր ջուրի խողովակներուն,բայց որ կելլեր մինչև հոս,այդ հի՛ն,շա՛տ հին մեղեդին,բոլորին ծանոթ>>[8]:

Աշակերտները պետք է մտածեն , կիսվեն իրենց մտքերով, թե այդ ի՞նչ մեղեդի էր, կա՞ր արդյոք հետդարձի ճամփա հերոսների համար:

Տալիս եմ շերտավորված տնային հանձնարարություն

Տնային հանձնարարություն <<Երկխոսի՛ր Պետրոս-Պիերի հետ՝ համոզելով վերադառնալ պայքարի ,բայց այս անգամ հաղթելու նպատակով…

Ավելի թույլ սովորողներին՝ <<Գրի՛ր քո կարծիքը Պետրոսի մասին>>:

[8] Շահան Շահնուր ,Երկեր երկու գրքով,<<Նահանջը առանց երգի>>,<<Սովետական գրող>> հրատ.,Երևան,1982,էջ 164

Եզրակացություն

Հետազոտելով << Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը Շահան Շահնուրի <<Նահանջը առանց երգի >> վեպի միջոցով>> թեման՝ եկա այն եզրահանգման, որ հայ գրականությունը օգնում է աշակերտներն հասկանալու,թե ինչպես են գրական երկերում դրսևորվում հեղինակի ինքնությունը, մտածողությունը, գրական-քաղաքական ,գեղագիտական հայացքները:Ինչպես նաև բացահայտելու հենց իրենց արմատները ,տեսնելու իրենց իսկ անձը պատմականորեն ձևավորված մշակութային համատեքստում,ճանաչելու սեփական ինքնությունը:Մեկ անգամ ևս համոզվեցի թեմայի արդիականության մեջ,քանի որ արտագաղթի և ձուլման վտանգը

առկա է նաև այսօր:Վեպի ուսուցման ընթացքում կիրառելով տարբեր մեթոդներ ՝ եկա այն եզրահանգման,որ զարգանում է աշակերտների քննադատական մտածողությունը, աշակերտները ձեռք են բերում 21-րդ դարի հմտություններ:Սովորողների մոտ բացահայտվում և ձևավորվում է արժեքային նոր համակարգ,կայուն բնավորություն,նոր մտահորիզոն, կարողունակություններ, որոնցով կկարողանան պայքարել նահանջի և ձուլման դեմ:Թեմայի ուսուցման ավարտին սովորողները կարողացան ավելի լավ ճանաչել հային,գնահատել հայի բարոյական արժեքները,ազգային դիմագիծը , մշակույթը ,բարքերը և այն ամենը,ինչը կարող է հային հայ պահել աշխարհի ցանկացած կետում:Սովորողները հասկացան ,որ ազգային արմատներից նահանջած ճակատագրերը դատապարտված են ձուլման ,և յուրաքանչյուրի պարտքն է պահել մեր ազգային դիմագիծը,կարևորել հայրենիքը, հայրենի հողը:Հասկացան նաև մի մեծ և արժեքավոր ճշմարտություն . <<Ամեն ժողովուրդ կարող է հարատևել միայն իր հողի վրա,իր հայրենիքում>>[9]:

Հետազոտության ընթացքում եկա նաև այն եզրակացության,որ նշված թեման և վեպում արծարծված խնդիրները ժամանակավրեպ չեն,այսօր էլ այն արդիական է և լուրջ մարտահրավեր է ապագա սերունդներին: Ամենակարևոր եզրահանգումը, Որ կատարեցի , այն էր,որ ամեն անգամ ,երբ կարդում և ուսուցանում ենք այս հրաշալի ու ինքնատիպ վեպը, լցվում ենք խորը հայրենասիրությամբ , կրկին բորբոքվում է սերն առ հայրենիք ,և՛ հուզվում ենք,և՛ բարկանում ,և՛ հասկանում ,որ հայրենիքն ապրում է հայրենասիրությամբ:Համոզված եմ,որ աշակերտների հոգում ևս բորբոքվում է այդ վեհ սերը, նրանք նույնպես ափսոսանք են ապրում նահանջող ազգի համար:Բայց երբ ուսուցիչը տեսնում է իր սաների աչքերի կայծը,երբ զգում է նրանց սերն ու նվիրվածությունը հայրենիքին, հասկանում է.<< Չէ, թշվառ չէ հայրենիքը,եթե երիտասարդներն այսպիսին են>> :

[9] Ա.Եղիազարյան Հայ գրականության դասագիրք 12 ,Երևան,<<Մանմար>> ,2016,էջ 55

Գրականության ցանկ

1. Մուրացան, Երկերի ժողովածու, հատոր երկրորդ,Երևան, 1975թ.

2 .Շահան Շահնուր ,Երկեր երկու գրքով,<<Նահանջը առանց երգի>>,<<Սովետական գրող>> հրատ.,Երևան,1982թ.

3. Հ. Թամրազյան,Դ.Գասպարյան,Ժ.Քալանթարյան,<<Հայ գրականություն 10>>,Երևան,<<Լույս>>,2000թ.

4. Յու.Ա. Ամիրջանյան, ,Ա.Ս. Սահակյան Մանկավարժություն,ուսումնական ձեռնարկ, Երևան,2004թ.

5. Մանասյան Ն.<<Մանկավարժություն >>ամսագիր,Երևան, 2004թ.

6. Վ.Միրզոյան,Ա. Սարգսյան <<Մշակութաբանություն>>,ուսումնական ձեռնարկ,Երևան ,2007թ.

7.Ա. Եղիազարյան <<Հայ գրականություն 12 >>.Երևան,Մանմար ,2016թ.

8. ՀՀ կառավարության որոշում 136-Ն,4 փետրվարի 2021- Հանրակրթական պետական չափորոշիչ:

9. ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրաման 44-Ն ,30 մարտի 2023թ.